ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 028

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.01.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 014 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 26.01.2021թվականի <<Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը առանձին միավոր գրանցելու մասին>> թիվ 014 որոշումը:

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 3.80674 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0109- գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն:

3. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 4.70220 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0109- գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 029

ԱԲՈՎ ՇԱՀԵՆԻ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 118-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***.

1. Վերականգնել Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Աբով Շահենի Շահինյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում գտնվող, 1991թ.-ին սեփականաշնորհված (հիմք՝ արխիվային տեղեկանք թիվ ՎՏ-871, տրված 25.11.2019թվականին) 24.98քմ մակերեսով արտադրամասի և դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա 0.06267 հա (ծածկագիրը՝ 10-006-0283-0001) և 0.21586 հա (ծածկագիրը՝ 10-006-0283-0004) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի, գործառնական նշանակությունը՝ գյուղ. արտադրական, հողհատկացման հիմքերը՝ ըստ սույն որոշման անբաժանելի մաս կազմող շինության և հողամասերի հատակագծերի:

2. Վերոնշյալ անշարժ գույքերին տալ հետևյալ հասցեները.

ա) 0.06267հա հողամասը և շինությունը հասցեավորել՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր 35-րդ փողոց թիվ 11,

բ) 0.21586հա հողամասը հասցեավորել՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր 35-րդ փողոց թիվ 13:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 030

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6 ՓՈՂՈՑ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ԶԱՎԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ /ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/, ՍԻՐՎԱՐԴ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԼԱՎԻԿ ԶԱՎԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով Սլավիկ Զավենի Սարգսյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1.Ճանաչել համասեփականատերեր Զավեն Արամի Սարգսյանի /մահացած. 2001թ./, Սիրվարդ Վարազդատի Կարապետյանի (ծնվ. 1938թ.) և Սլավիկ Զավենի Սարգսյանի(ծնված 1969թ.), սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 6 փողոց թիվ 20 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 031

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 155 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ /ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ԱՐԳԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.07952 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 118-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 14 հուլիսի 2020թվականի թիվ 155 որոշումը:

2. Վերականգնել Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի նախկին բնակիչ /հանգուցյալ/ Արգամ Խաչատուրի Սարգսյանի (ծնված 15.05.1916թ.) սեփականության իրավունքը Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 10-րդ փողոց, թիվ 15 հասցեում գտնվող, 1991 թվականին սեփականաշնորհված 705.83քմ մակերեսով անասնագոմի և դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա 0.07952 հա հողամասի (ծածկագիրը՝ 10-006-0353-, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական) հողահատկացման հիմքերը՝ ըստ սույն որոշման անբաժանելի մաս կազմող շինությունների և հողամասի հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 032

ԱԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6Փ ., 10 Տ, ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՐԳԻՍԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ, ՀԱՄԵՍՏ ԱՇՈՏԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ՔՐԻՍՏԻՆԵ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍԱՄՈՅԼՈՎԱՅԻՆ, ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ, ԼՈՒՍԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ , ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1.Ճանաչել Խաչատուր Սարգիսի Օհանյանի /ծնված՝19.09.1962թ./, Համեստ Աշոտի Աբրահամյանի /ծնված՝05.03.1962թ./, Քրիստինե Խաչատուրի Սամոյլովայի /ծնված՝ 22.01.1385թ./, Սերգեյ Խաչատուրի Օհանյանի /ծնված՝ 20.07.1986 թ./, Լուսիկ Խաչատուրի Օհանյանի /ծնված՝26.05.1988թ./ սեփականության իրավունքը՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, գյուղ Խաչիկ, 6-րդ փողոց, 10-րդ տուն հասցեում գտնվող բնակելի տան, օժանդակ կառույցների և տնամերձ հողամասի նկատմամբ:

2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 033

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.03456ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՇԵՆՔԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, ՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.03456հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության (ծածկագիրը՝ 10-025-0013-, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների) հողամասը և հողամասի վրա առկա պոմպակայանի շենքը գրանցել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն:

2. Վերը նշված հողամասին և շինությանը տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք գ. Խաչիկ 1-ին փողոց N11:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 034

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՂԱՐՇԱԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 2.33085ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.00371ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.05.2002թվականի թիվ 498, 29.12.2005թ. N 2387-Ն որոշումները, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*՝

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վաղարշակ Գարեգինի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2.33085հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիր՝ 10-008-0112-0124, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասից առանձնացված 0.00371հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության,
2. 0.00371 հա բնակավայրերի նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 32.85քմ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
3. Վերը նշված հողամասին և բնակելի տանը տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի Երևանյան խճուղի 9-րդ փակուղի, թիվ 9:
4. Առաջարկել կառույցն իրականացրած Վաղարշակ Պետրոսյանին

   ա) վճարելու 1ք.մ.՝ 1209 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 39 716 (երեսունինները հազար յոթ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները,

բ) վճարելու 0.00371հա բնակավայրերի նշանակության հողամասի և գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի ջրովի վարելահողի կադաստրային արժեքների տարբերությունը՝ 39 957 << դրամ (37.1քմ.*(1221դր-69.5դր.) = 42 721դր.), հիմք ընդունելով << Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին ենթակետը:

5. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում << Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
6. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**